# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ-ՊՊԾ-ԳՀԱՊՁԲ-17/3-01-1

ք. Երևան «26» 10 2017թ.

<<Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայությունը>>, ի դեմս Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության պետ Հ.Հարությունյանի, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին >> ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության պետական պահպանության կանոնադրության հիման վրա այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Գդակ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս.Երանոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 16714200(տասնվեց միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Հայաստանի Հանրապետության պետական պահանջների ծառայություն | «Գդակ» ՍՊԸ |
| ք.Երևան, Պուշկին փող.1-ին փակուղի 20 | ք. Երևան, Սարի Թաղ 1 շարք, տուն 8 |
| ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/հ 900011004497 | Հ/Հ 24701004871500000 |
| ՀՎՀՀ 00006796 | ՀՎՀՀ 00432144 |
| Պետ Հ. Հարությունյան | Տնօրեն Ս. ԵՂԱՆՈՍՅԱՆ |

*Հավելված N 1*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգմանը (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 18441100/20 | Ամենօրյա կիսաբրդյա գլխարկ | ԳԴԱԿ ՍՊԸ Հայաստան | Ամենօրյա կիսաբրդյա գլխարկ /հատ/-16980-82: Գլխարկը կարվում է 2381 արտիկուլի կիսաբրդյա դեղեռկանաչավուն գույնի գործվածքից: Գլխարկը ներսից պոստոնած է ԳՕՍՏ-2272-96 8-Շ5-ԲՇ արտիկուլի ատտառով, բաղկացած է սև լաքապատ գլխարկահովարից, գլխարկաբոլորքը 2581 ԻԱ արտիկուլի մուգ դեղեռկանաչավուն գույնի մահուդից, վրան երկու 14մմ մետաղյա ոսկեգույն ՀՀ զինանշանի պատկերով դրոշմված կոճակով ամրացվում է ոսկեգույն մետաղական մանրաթելերից հյուսված գարդապարան /հյուսապարան/: Գլխարկաբոլորքի վերևի և գագաթի միացման տեղով անցնում է 2 մմ լայնքով կապույտ մահուդից կանտ, էլեկտրոստվարաթղթե ներդիրով և 3,5 սմ լայնքով ատենապան կուշտ շրջանակով: Ներսից գլխարկահատակի եզրագծով տեղադրվում է հեռամպատասիան չափսի զգպանակատիպ մետաղյա ժապավեն: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասում ամրացվում է ոսկեգույն մեծ գլխարկանշան, դափնեպսակի տեսքով,իսկ գլխարկակատարի վրա Հայաստանի Հանրապետության զինանշանը: Արտադրվում են 54-62 չափսերի: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Գլխարկահատակի վրա ներսի կողմից կարվում է կաշվից պիտակ, որի վրա նշվում է արտադրող կազմակերպության անվանումը և գլխարկի չափը: Գլխարկագագաթի բարձրությունը գլխարկաբոլորքի վերին եզրից 8,5-9սմ՝ կախված գլխարկի չափերից: Գլխարկաբոլորքի բարձրությունը 4,8-5,2սմ: Սկսած 53 չափսի գլխարկից, գլխարկահատակի տրամագիծը պետք է լինի 29,5 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 3մմ:<br>Փաթեթավորումը՝ արկղերով, մեկ արկղի մեջ՝ 20 հատ: Արկղերը՝ պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը. չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և տեխնիկական պայմանի | հատ | 7200 | 518400 | 72 | Ք.Երևան Պռոշյան փ. 1-ին փակուղի 20 | 72 | Մինչև 10-ը դեկտեմբերի 2017թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | համարը:<br>Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, երկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:<br>Պահանջվում է անհատական կար.չափագրումը և հետագայում չափսերի ճշտումը /примерка/կատարվում է մատակարար կազմակերպության կողմից իր ծախսերի հաշվին, ըստ պատվիրատուի տված հասցեների:<br>Մատակարարման պահին գլխարկների վրա պետք է նշված լինի տվյալ գլխարկի պատվիրատուի Անուն Ազգանունը: | | | | | | | |
| 2 | 18441100/21 | Ականջակալներ ով գլխարկ ոչխարի մորթուց | ԳԴԱԿ ՍՊԸ Հայաստան | Ականջակալներով գլխարկ, ոչխարի մորթուց/հատ/-10325-79: Գլխարկը բաղկացած է քառասնպանի թասակից, ճակատային մասից/հովհար/ և ականջակալներով ծոծրակամասից: Ականջակալների վրա կարված են 10-14 մմ լայնության մոխրագույն տիսմայե կապիչներ: Ականջակալներով գլխարկը կարվում է 4661-76 արտիկուլի կամ համարժեք մոխրագույն ոչխարի մորթուց: Գլխարկահատակը կարվում է գլխարկների համար նախատեսված մուգ մոխրագույն մահուդից, 1մ² մակերեսային խտությունը 464գր, բաղադրությունը՝ 77% բուրդ և 23% վիսկոզա: Ներսամասը կարվում է 520 արտիկուլի կամ համարժեք մոխրագույն սատինից: Ներսից վատինան կարվում է բամբակյա թափանցկաց քաթանից և տերևավոր վուշ-բամբակից: Գլխարկահատակի վրա ներսի կողմից դրոշմապիտակ, որի վրա նշվում է արտադրող կազմակերպության անվանումը և գլխարկի չափսը: Ճակատամասի /հովհար/ գլխարկաթելերի և ականջակալների ներսից դրվում է կենցաղային բամբակյա մաղյա: Ճակատամասի/հովհարի/ բարձրությունը սկսած 54 չափսի գլխարկից, պետք է լինի 8.8սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ծոծրակամասի բարձրությունը սկսած 54 չափսի գլխարկից, պետք է լինի 8.2սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ականջակալի երկարությունը միացման կարից սկսած 54 չափսի գլխարկից, պետք է լինի 18սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 5մմ: Արտադրվում են 54-62 չափսերի: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արկղերում գլխարկները պետք է լինեն չդեֆորմացված: Փաթեթավորումը՝ արկղերով, մեկ արկղի մեջ՝ մինչև 36 հատ: Արկղերը՝ պիտակավորված, որի վրա պետք է նշված լինի տեսակաանուանվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը և նենսինկական պայմանի համարը:<br>Պատվիրատուի պահանջով, մատակարար | հատ | 9000 | 765000 | 85 | Ք.Երևան Պռոշյան փ. 1-ին փակուղի 20 | 85 | Մինչև 10-ը դեկտեմբերի 2017թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ –ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:<br>Պահանջվում է անհատական կար,չափագրումը և հետագայում չափսերի ճշտումը /որակբա/կատարվում է մատակարար կազմակերպության կողմից իր ծախսերի հաշվին, ըստ պատվիրատուի տված հասցեների:<br>Մատակարարման պահին գլխարկների վրա պետք է նշված լինի տվյալ գլխարկի պատվիրատուի Անուն Ազգանունը: | | | | | | | |
| 3 | 35811170/9 | Կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ | ԳԴԱԿ ՍՊԸ Հայաստան | Կիտել ամենօրյա և ազատթող փողքերով տաբատ/լրակազմ/: Կիսաբրդյա կոստյումը բաղկացած է կիտելից և ազատթող փողքերով տաբատից: Կիտելը բաղկացած է կենտրոնական կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևերից: Լանջափեշերը կոճկվում են 4 ՀՀ զինանշանի պատկերով 22մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները /գրպանների կափույրներ, օձիք/, նույնպես կրկնակարվում են սոսնձող կտորով, և վուշ-բրդյա քաթանով: Լանջափեշերի վրա վերևից մշակվում են ուղահայաց կենտրոնական ծալվածքով վրադիր գրպաններ, գրպանների ձևավոր կափույրները կոճկվում են մեկական ՀՀ զինանշանի պատկերով 14մմ ոսկեգույն ալյումինե համաձուլվածքից կոճակներով, իսկ կողքերից կտրվածքով, կափույրներով գրպաններ: Մեջքի ներքևում, կենտրոնից բացվածքով: Օձիքը ծալովի, օձիքի միացման կարում մշակվում է կախիչ, թևերը ներկարված: Աստառ՝ մետաքսյա կամ համարժեք դեղնականաչավուն գույնի կտորից: Հախ լանջափեշին ներսամասից մշակվում է կտրվածքով ծոցագրման, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Ազատթող տաբատը կազմված է առաջամասից, հետևամասից և գոտուց: Առաջամասը՝ կռոյին գրպաններով: Աջ հետևամասում կտրված գրպան՝ կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Գուլֆիկը մշակվում է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին 6 հատ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար: Կողային կարերում անցկացվում է 1.5-2մմ լայնությամբ կապույտ գույնի մսհոտից երիզներ: Առաջամասում, մինչև ծնկները մշակվում է մետաքսյա արտիկուլի կամ համարժեք դեղնականաչավուն գույնի կտորից աստառ: Կոստյումը՝ 2318 արտիկուլի կիսաբրդյա դեղնականաչավուն գույնի գործվածքից 280 գրամ 1մ² մակերևույթին խտությամբ 75% բրդի և 25% պոլիէսթեր բաղադրության: Արտաքին տեսքը՝ համաձայն | հավաքածու | 40800 | 3264000 | 80 | Ք.Երևան Պռոշյան փ. 1-ին փակուղի 20 | 80 | Մինչև 10-ը դեկտեմբերի 2017թ.. |